Կրակովի արքեպիսկոպոսն ասել է «Աղաչում եմ Աստծուն, որ լեհ ժողովրդին հասկացնել, թէ ո՞րն է իր քաղաքական օգուտը և չընկնել իր առաջ դրած թակարդը»։ Քահանաները եկեղեցում քարոզում են ընդդէմ գօրաժողովի, որը յօգուտ գերմանացոց է միայն։

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Կօրֆու կղզում ապաստան գտած սերբական Դիմիտրի միտրոպոլիտը մի նամակով յայտնում է Միխայիլ վարդապետին, որը Մոսկուայում է գտնուում, սերբական եկեղեցու ներկայ դառն վիճակի մասին։

Մետրոպոլիտը յայտնում է, որ գաղտնի տեղեկութիւն է ստացել, թէ Բոլգարիայում գտնուող սերբ քահանաներից մի մասը վախճանուել է սարսափելի պայմանների մէջ գտնուելու պատճառով, մի մասին էլ բոլգարներն են սպանել։ Սերբիայում մնացած քահանաները զրկուած են ծխերից. նրանց տեղը բռնել են բոլգար քահանաները, որոնք սերբ ժողովրդի խղճի և կրօնական հաւատալիքների վրայ սարսափելի բռնութիւն են գործ դնում։ Նոյն տեսակ դրութիւն է իշխում և աւստրիացիների գրաւած սերբական մասում։

Միտրոպոլիտը յոյս է յայտնում հզօր Ռուսաստանի օգնութեամբ ձմեռը վերադառնալ հայրենիք։ Այն ժամանակ մեծ օգնութեան կարիք պիտի լինի. 500 եկեղեցի նորից կառուցանել. եկեղեցական գրքերը, սպասները, զանգերը, որոնք ոչնչացուած են նորից պիտի դնել։

Միտրոպոլիտը խնդրում է դիմել ռուս ժողովրդի եղբայրական օգնութեան և ժողովարարութիւն անել, որ վերադարձից յետոյ հնարաւոր լինի բաւարարել ժողովրդի հոգևոր կարիքները։